

ումանք, այլ ազգին ընդհանուր վիճակը, սնտեսական հոգեբուն մէջ մտասոյց, քաղաքական փոթորկումներէ տարուբեր, ներքին պառակտումներով վիրաւոր, կրօնական անտարբերութեամբ ջլատուած ժողովուրդի այն կացութիւնը, որ մերինն է այժմ, և ուր հոգևոր ու բարոյական գործի մը յաջողութիւնը զրեթէ հրաշքէ մը կախուած է: Ու համոզուած է ինքը սակայն թէ պիտի կատարուի այդ հրաշքը, եթէ ամէն հայ սիրէ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին, որ մայրն է մեր հաւատքին, եթէ ծնողքները կատարեն իրենց պարտականութիւնը՝ քրիստոնէական հոգիով, մայրենի եկեղեցւոյ, լեզուի, հայրենիքի և սրբազան աւանդութեանց սիրով դաստիարակելով իրենց զաւակները. եթէ հայ ժողովուրդը իր տարաշխարհիկ կեանքին մէջ կարենայ օտարներուն առջև բարձր պահել իր ազգին անունը, պարկեշտ և բարեպաշտ կենցաղավարութեամբ և իր ապրած երկրին օրէնքներուն և բնակակից այլ ցեղերուն հանդէպ իր քաղաքացիական պարտականութեանց կատարումով. եթէ ամէնքս չմոռնանք երբեք ԼՂմիածինը, ազգային կենդանութեան այդ սիրտը, և կարենանք հոգևով անանջատ պահել ինքզինքնիս անկէ՝ իրբեւ հարազատ զաւակներ մեր անձկալի մօրմէն. եթէ, վերջապէս, ազգն ամբողջ, առանց այլևայլի, աննկատ և ողջմիտ իմաստութիւնն ունենայ խորհելու և ընդունելու թէ մեր հինաւուրց և ցանկալի հայրենիքը յարութիւն առած է իր գերեզմանական անշքութենէն, և սնտեսական, ճարտարադիտական և քաղաքակրթական բազմատեսակ ձեռնարկութիւններով վերականգնուած, ի վիճակի է ոչ միայն պատսպարելու և կերակրելու իր ամբողջ բնակիչները, այլ նաև իր հովանիին ներքև ընդունելու հետզհետէ աշխարհի չորս ծայրերը ցրուած անհայրենիք Հայութիւնը. ու այս ամէնը՝ անհուն ջանքերովը Հայաստանի Խորհրդային ներկայ կառավարութեան, որ, ատոր համար նոյն իսկ, իրաւունք ունի անխտիր ամէնուն սիրոյն, մեծարանքին և երախտագիտութեան:

Ամէնուս, ամէն Հայու, պարտքն է կանգ առնել այս բառերուն ամէն մէկին առջև յարգանքով և երկիւղածութեամբ, իբրև անառարկելի իմաստութեան զոհար խրատներու առջև. լռել՝ լսելու համար Հօրը ձայնը, որ անկորնչական իրաւունքներու յուշքը կ'արթնցնէ մեր մէջ, նոյն ատեն նորոգելով մեր սրտերուն խորը՝ անհրաժարելի պարտականութեանց զգացումը:

* * *

ՀԱՒԱՏՔԻ ԵՒ ՄՏԱՆՄԱՆ ՅՈՒՐԵՐ

ՔՐԻՍՏՈՆ Է ԻՅ ԲԱՐՈՅԱՎԱՆԸ

Քրիստոնէից բարոյականը աշխարհի մարդոց բարոյականը չէ բնաւ. անիկա այնքան չի նմանիր այս վերջինին որ՝ անոնք որ համարձակօրէն կ'ընդունին և հաւատարմաբար կը գործադրեն դայն, ընդհանուր մարդկութեան ծոցին մէջ կը կազմեն բոլորովին առանձին ցեղ մը, և, եթէ կարելի է ըսել, նոր մարդկութիւն մը: Այնքան քիչ կը նմանի անիկա ասոր, որ դայն դաւանողները անհասկնալի կը մնան դայն չգաւանդողներուն, ու հասարակաց կիանքը, եթէ ընդհանուր առմամբ քրիստոնէական ընթացք մը առած է, ինչ ինչ գիծերով անպատճառ երևան կը բերէ արտակարգ և խորհրդաւոր բան մը, չորուն անունը դայն ունեցողը միայն գիտէ: Որչափ ալ բարձր ուղուի հանել բնական մարդուն կարողութիւնները, առաքինութիւններ կան, որոնք քրիստոնէից միայն յատուկ են, ու զոհողութիւններ՝ որոնք քրիստոնեանե՛րը միայն ատակ են: Ինչո՞ւ. վասնզի անոնց հաւատքին մէջ նոյն իսկ, որ ազգիւրն է աստուածային գործին, կը բովանդակուի միւսնեքէն աւելի խորունկ և աւելի ամբողջական զոհողութիւն մը, որուն մէջ կանխադէս ամբօրհուած են արդէն բոլոր միւսները:

Ա. Վ.